ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1291-Ա/2 «24» սեպտեմբերի 2020

2020 ԹՎԱԿԱՆԻ (ԵՐՐՈՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ)՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) <<2020 թվականի՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման (երրորդ քննաշրջան) աշխատակարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) <<Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկության ձևով քննությունների կազմակերպման (2020 թվականի երրորդ քննաշրջան) ժամանակացույցը>> և <<Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկության ձևով քննությունների կազմակերպման (2020 թվականի երրորդ քննաշրջան) ժամանակացույցը>>՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Քննություններն անցկացնել 2020 թվականի հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 15-ը ներառյալ:

3. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել նախարարության հանրակրթության վարչության պետին:

Նախարար Արայիկ Հարությունյան

24.09.2020

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378